ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

Ի պատասխան Ձեր 20.11.2023թ. հ. 05/11 գրության՝ տեղեկացվում է.

Տերևների մաքրման պրոցեսն օդ փչող սարքերի միջոցով Երևան քաղաքում կիրառվում է բավականին երկար ժամանակ: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը ևս ձեռք է բերել նմանատիպ՝ օդ փչող սարքավորումներ և դրանք պարբերաբար օգտագործվում են ՀՈԱԿ-ի աշխատակիցների կողմից:

Ինչ վերաբերում է Մաշտոցի և Սայաթ-Նովայի պողոտաներում այն կիրառելուն, ապա այժմ՝ ելնելով թափված տերևների ծավալից, սարքավորումները օգտագործվում են հիմնականում այգիներում և պուրակներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ